ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ռազմավարությամբ սահմանված 2024թ. (տարեկան կտրվածքով) միջոցառումների կատարման ընթացքի և արդյունքների
(Քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն
ապահովող միջոցառումների ցանկը հաստատվել է 2021 թվականի ապրիլի 8-ի N531-Լ որոշմամբ)

Հ/Հ	Նպատակ / խնդիր / միջոցառում	**Կատարման ընթացիկ վիճակը (կատարված է, կատարված չէ, կատարված է մասնակի)**
1	2	3
Նպատակ 1. Կառուցապատման թույլտվությունների համակարգերի կանոնակարգում և պարզեցում **Խնդիր.** Վարչարարության, թույլտվությունների, եզրակացությունների տրամադրման կարգերի վերանայում		
1	1.1. Կառուցապատման թույլտվությունների տրամադրման գործառույթների զգալի մասը իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ e-permits միասնական համակարգի միջոցով, դիտարկելով այն որպես էլեկտրոնային մեկ հարթակ, որտեղ կգործեն ընթացակարգին մասնակից բոլոր մարմինները և կազմակերպությունները Ժամկետ՝ 2021թ.	**Կատարված է:** Քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվությունները 01.01.2025թվականից ՀՀ բոլոր համայնքներում տրամադրվում են բացառապես էլեկտրոնային համակարգի միջոցով: - Համակարգը գործարկվել է փուլային. 01.01.2022 թ.՝ Կոտայքի մարզի Նաիրի, Արմավիրի մարզի Էջմիածին, Արարատի մարզի Մասիս և Լոռու մարզի Վանաձոր համայնքներում, 01.08.2024թ. ՀՀ 4 մարզերում՝ (Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Լոռու մարզերում), 01.01.2025 թ.՝ ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում նախագծման և շինարարության թույլտվությունների տրամադրումն իրականացվում է բացառապես էլեկտրոնային եղանակով՝ e-permits (ներկայումս «Urban.e-gov.am» թվային հարթակում) միասնական համակարգի միջոցով:
Նպատակ 2. Քաղաքաշինական կայուն զարգացում. ներդաշնակ կենսամիջավայրի ձևավորում և նպաստում բնակչության տարածքային համաչափ բաշխվածությանը. ներկա և գալիք սերունդների կենսագործունեության բարենպաստ միջավայրի ստեղծում. ազգային արժեքների և ավանդույթների, հոգևոր ու մշակութային ժառանգության պահպանման և դրանց վերարտադրության ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում. անկառավարելի ուրբանիզացման հնարավոր սպառնալիքների չեզոքացում. **Խնդիր. Տարածական պլանավորման բազմակենտրոն զարգացման սկզբունքների ներդրում**		

1	2	3
2	2.1.1. ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի առաջադրանքի մշակում Ժամկետ՝ 2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	**Կատարված է:** ՀՀ քաղաքային և գյուղական համայնքների տարաբնակեցման ներկա անհամաչափ զարգացման միտումները թելադրում են ռազմավարական նոր ուղղությունների առաջադրում, և անհրաժեշտություն է առաջացել վերագնահատել, վերաբաշխել երկրի ռեսուրսներն ու կարողությունները՝ հասարակության հեռանկարային կայուն զարգացումն ապահովելու նպատակով: ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակվել է ՀՀ տարաբնակեցման և տարածքային կազմակերպման գլխավոր նախագծի առաջադրանքը հաստատվել է 2025թ–ի մարտի 20–ի կառավարության նիստում:
	2.1.2. ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի մշակում Ժամկետ՝ 2025-2027թթ.	Նախատեսվում է գնման գործընթացի միջոցով նախագծի մշակումը
3	2.2. ՀՀ միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծերի մշակում Ժամկետ՝ 2023թ	**Կատարված է:** «Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակում» ծրագրի կատարման շրջանակներում **971** բնակավայրից **969**-ի համար փաստաթղթերը հաստատվել են, իսկ **2**-ի համար՝ գտնվում են հաստատման փուլում: 1.ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք-4, Սյունիք-6 և Սյունիք-7 լրամշակված փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ կադաստրի կոմիտե՝ համաձայնեցման: 2. ՀՀ Լոռու մարզի Լոռի-1, Լոռի-2, Լոռի-3, Լոռի-9 լրամշակված փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և ՀՀ կադաստրի կոմիտե՝ համաձայնեցման: 3. ՀՀ Կոտայքի մարզի 1-10 լրամշակված նախագծերի վերջնական էլեկտրոնային տարբերակները տրամադրվել են ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմին, իսկ ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմին՝ Կոտայք-4 փաստաթղթում ներառված ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի գլխավոր հատակագիծը՝ հաստատման:

1	2	3
		4. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք-3 (Մարտունի քաղաք և Վարդենիկ բնակավայր) լրամշակված նախագիծը ներկայացվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ՝ հաստատման: 5.Կոմիտեն ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմին կրկին ներկայացրել է միջգերատեսչական հանձնաժողովի 2020 թվականին դրական եզրակացություն ստացած ՀՀ Արարատի մարզի «Արարատ-4» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Հովտաշեն բնակավայրի գլխավոր հատակագծի նախագիծը, որն առաջարկվել է ՀՀ մարզպետի և ավագանու որոշումներով հաստատել: 6. ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ է ներկայացվել Իջևան համայնքի Ենոքավան բնակավայրի գլխավոր հատակագծի լրամշակման, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի նախագծի վերաբերյալ պետական համալիր փորձաքննություն իրականացնող հանձնաժողովի դրական եզրակացությունը՝ հաստատման: ***<u>Հաստատվել են</u>***. ՀՀ Տավուշ-6 միկրոռեգիոնալ փաստաթուղթ (թվով 55 բնակավայր), - ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնք (թվով 7 բնակավայր), 1. ՀՀ Արարատ-8 միկրոռեգիոնալ փաստաթուղթ (թվով 95 բնակավայր), - ՀՀ Արարատ-4 ներառված Հովտաշեն բնակավայրի գլխավոր հատակագիծը, որը հաստատման փուլում է, 2. ՀՀ Սյունիք- 8 միկրոռեգիոնալ փաստաթուղթ (թվով 138 բնակավայր) հաստատվել են, 3. ՀՀ Վայոց ձոր- 6 միկրոռեգիոնալ փաստաթուղթ (թվով 45 բնակավայր) հաստատվել են, 4. ՀՀ Արմավիր- 9 միկրոռեգիոնալ փաստաթուղթ (թվով 97 բնակավայր) հաստատվել են, 5. ՀՀ Արագածոտն- 11 միկրոռեգիոնալ փաստաթուղթ (թվով 114 բնակավայր) հաստատվել են, բացառությամբ Կոտայք-4 փաստաթղթում ներառված Նոր Երզնկա բնակավայրի,

1	2	3
		6. ՀՀ Շիրակ- 11 միկրոռեգիոնալ փաստաթուղթ (թվով 118 բնակավայր) հաստատվել են, - ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնք (թվով 11 բնակավայր) հաստատվել են, 7. ՀՀ Գեղարքունիք- 7 միկրոռեգիոնալ փաստաթուղթ (թվով 77 բնակավայր) հաստատվել են, - ***<u>ՀՀ Գեղարքունիք-3 (թվով 15 բնակավայր) հաստատման փուլում է,</u>*** 8. ՀՀ Լոռի-8 միկրոռեգիոնալ փաստաթուղթ (թվով 121 բնակավայր) հաստատվել են, - ***<u>ՀՀ Լոռի-1 (թվով 7 բնակավայր) լրամշակման փուլում են,</u>*** ՀՀ Կոտայք- 10 միկրոռեգիոնալ փաստաթուղթ (թվով 69 բնակավայր) հաստատվել են: ***<u>Կոտայք-4 փաստաթղթում ներառված Քասախ բնակավայրի գլխավոր հատակագիծը հաստատման փուլում է:</u>***
4	2.3. «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության մշակում Ժամկետ՝ 2021 թվականի մայիսի 2-րդ տասնօրյակ	**Կատարված է մասնակի** Մշակված առաջադրանքի հիման վրա կազմակերպվել է համապատասխան գնման գործընթաց և Կոմիտեի կողմից կնքվել պետական գնման պայմանագիր (2019թ.)՝ գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության մշակման համար: Նախագծի նպատակն է՝ - «Սևան» ազգային պարկի Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածում հանգստի գոտու ստեղծում, - Ներդրումային ծրագրերի իրականացման համար նպատակահարմար գոտիների առանձնացում, - Ազգային պարկի տարածքում կառուցապատման կանոնակարգման չափորոշիչների սահմանում: Պայմանագրի կատարման շրջանակներում նախագծող ընկերության կողմից նախագիծը մշակվել և ներկայացվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտե՝ քննարկման: Նախագծի հաստատումը չի կայանում օրենսդրությամբ նախատեսված հանրային լսումների չկայացման պատճառով: Կոմիտեն 2023 թվականի դեկտեմբերի 12-ի N01/11.2/16534-2023 գրությամբ դիմել է ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ խնդրելով «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի մշակման աշխատանքներն ավարտելու համար ժամկետը երկարաձգել մինչև ՀՀ շրջակա միջավայրի

1	2	3
		նախարարության կողմից ճշգրտված տվյալների տրամադրումը և վերջիններիս հիման վրա Նախագծի լրամշակումն ու հանրային քննարկում-լսումների իրականացումը:
5	2.4. Երևան քաղաքի մուտքերին հարող միջպետական և հանրապետական նշանակության պետական ավտոմոբիլային ճանապարհներին կից հատուկ կարգավորման գոտիների տարածքների կառուցապատման միասնական սխեմաների մշակում Ժամկետ՝ 2025թ.	**Կատարված է մասնակի (շարունակելի)** ՀՀ քաղաքաշինության ոլորտի ՀՀ 2023-2025 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի պետական բյուջեի հայտում՝ նոր նախաձեռնությունների մասով ներկայացվել է ՀՀ Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների մուտքերին հարող միջպետական նշանակության պետական ավտոմոբիլային ճանապարհներին կից հատուկ կարգավորման գոտիների տարածքների կառուցապատման միասնական սխեմաների մշակման արժեքի խոշորացված ցուցանիշներով նախնական հաշվարկ: Հաշվարկով նախատեսվել է հանրապետության 3 խոշոր համայնքների թվով 12 մուտքերին հարող միջպետական նշանակության պետական ավտոմոբիլային ճանապարհներին կից հատուկ կարգավորման գոտիների տարածքների կառուցապատման միասնական սխեմաների մշակում: ՀՀ կառավարության 2005 թ. 2404-Ն որոշման լրամշակման ենթատեքստում վերանայվել է նախատեսված սահմանափակ հատվածները՝ դիտարկելով միջպետակն և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ողջ ցանցի համար կանոնակարգման սխեմաների մշակումը:
6	2.6. Քաղաքաշինական և տարածական պլանավորման ոլորտում կարողությունների զարգացման համար տեղական համայնքներին տեխնիկական խորհրդատվության և օժանդակության տրամադրում Ժամկետ՝ 2023-2024թ.թ.	**Կատարված է:** **(շարունակական)** ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 21.11.2024թ. գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել կատարված աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 11.06.2024 թ. N46-Ա հրամանով հաստատվել է քաղաքաշինական և տարածական պլանավորման ոլորտում կարողությունների զարգացման համար տեղական համայնքներին տեխնիկական խորհրդատվության և օժանդակության տրամադրման նպատակով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի աշխատակիցների ՀՀ մարզերի համայնքների և մարզպետարանների համապատասխան մասնագետների կարողությունների հզորացման և շարունակական մասնագիտական կրթության վերապատրաստման

1	2	3
		դասընթացները: Ծրագրի շրջանակում վերապատրաստվել են 300 համայնքային մասնագետներ: Ծրագիրը շարունակական բնույթ է կրում:
7	2.5. Առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի շենքային պայմանների գույքագրում, ինչպես նաև վերանորոգման, վերակառուցման, օտարման նպատակահարմարության, նոր շենքերի կառուցման կարիքի գնահատում, հանրապետության համար կազմել բժշկական, սոցիալական և կրթական հաստատությունների տեղակայման նախընտրելի քարտեզ	Կոմիտեի կողմից համայնքներին տրամադրվել են հարցաշարեր, ստացվել է տեղկատվության զգալի մասը: Ամբողջական տվյալների բազան հավաքելուն պես կմշակվի փաստացի վիճակն արտացոլող քարտեզ և դրա հիման՝ կարիքների գնահատում:
Նպատակ 3. Պատմաճարտարապետական և բնական ժառանգության պահպանություն, վերականգնում, խնայողական օգտագործում **Խնդիր.** Ոլորտը կարգավորող մեթոդաբանության, ուղեցույցի և ռազմավարական փաստաթղթի մշակման անհրաժեշտություն		
8	3.1. Հայաստանի բնակավայրերի պատմական կառուցապատման, ճարտարապետական և բնական ժառանգության քաղաքաշինական ռեաբիլիտացիայի ծրագրերին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում Ժամկետ՝ 2025-2026թթ. 3.1.1 Հայաստանի բնակավայրերի պատմական կառուցապատման, ճարտարապետական և բնական ժառանգության քաղաքաշինական ռեաբիլիտացիայի ծրագրերի նախագծի առաջադրանքի մշակում 3.1.2 Հայաստանի բնակավայրերի պատմական կառուցապատման, ճարտարապետական և բնական ժառանգության քաղաքաշինական ռեաբիլիտացիայի ծրագրերի նախագծի ձեռքբերում	**Կատարված է մասնակի (շարունակելի)** ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակվել և ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի N 936–Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի կամ դրանց առանձին հատվածների պատմամշակութային հիմնավորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախատեսվում է պատմական բնակավայրերի տարածքում քաղաքաշինական հատուկ կարգավորման գոտի սահմանված հատվածների համար կարգի պահանջներին համապատասխան կազմել քաղաքաշինական միջավայրի ինքնության պահպանման՝ ռեաբիլիտացիայի նախագծի առաջադրանք: Կազմակերպել նախագծերի մշակման աշխատանքները:

1	2	3
9	3.2.1 ՀՀ զբոսաշրջային համակարգի տարածքային կազմակերպման գլխավոր նախագիծը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	**Կատարված է մասնակի** ՀՀ կառավարության 18.11.2021 թ. N 1902-Լ որոշմամբ հաստատված Հավելված N 1-ի «Քաղաքաշինության կոմիտե» բաժնի 1.6.1 կետով (վերջինիս վերնագիրը փոխվել է 2023 թվականին) նախատեսված «ՀՀ վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն համակարգի տարածքային գլխավոր նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և ՀՀ կառավարության 08.04.2021թ. «ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 531-Լ որոշման N 2 հավելվածի 3-րդ նպատակի 3.2.1 կետով նախատեսված միջոցառումը նույնաբովանդակ են: ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից վերը նշված միջոցառումների շրջանակում մշակվել է «ՀՀ վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն համակարգի տարածքային գլխավոր նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ներկայացվել է շահագրգիռ մարմիններ՝ համաձայնեցման: Կարգը հաստատելուց հետո վերջինիս դրույթներին համապատասխան կմշակվի առաջադրենք: Առաջադրանքի հիման վրա կմշակվի «ՀՀ վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն համակարգի տարածքային գլխավոր նախագիծը»:
10	3.3. Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի իրագործումը Հայաստանում Ժամկետ՝ 2025թ.	**Կատարված է:** ՀՀ քաղաքաշինության կոմիտեի համակարգմամբ 08.06–10.06.2022թ. Հայաստանի Հանրապետությունում Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի իրագործման աշխատանքների շրջանակում նախատեսվող «Լանդշաֆտի կոնվենցիա. Կրթական բաղադրիչ» ազգային աշխատաժողովը, որի շրջանակում կայացել է քաղաքաշինության կոմիտեի և Եվրոպայի խորհրդի Լանդշաֆտի կոնվենցիայի կողմից համատեղ մշակված «Բնապահպանական կրթական գործողություններ տարրական դպրոցների համար» մանկավարժական գրքույկի

1	2	3
		շնորհանդեսը: Եվրոպայի խորհրդի կողմից գրքույկի 300 տպագիր օրինակ տրամադրվել է Հայաստանի Հանրապետությանը: Լիազոր մարմնի՝ քաղաքաշինության կոմիտեի և ԿԳՄՍ նախարարության հետ համատեղ գրքույկների օրինակներ տրամադրվել են ՀՀ համայնքներին:
Նպատակ 4. Քաղաքաշինական ոլորտի գործընթացների կանոնակարգում, դյուրինացում ու գործառնության արդյունավետության բարձրացում, Խնդիր. Տեղեկատվական միասնական հասանելի հարթակի ստեղծում		
11	4.1. Պետական քաղաքաշինական տեղեկատվական համակարգի ներդրման ծրագրի իրագործում Ժամկետ՝ 2025-2026թթ.	**Կատարված է մասնակի** Պետական քաղաքաշինական տեղեկատվական համակարգի ներդրման ծրագրի իրագործման շրջանակում կատարվել է. մեթոդաբանության մշակման շրջանակում քաղաքաշինական տեղեկատվություն պարունակող հիմնական բազային շերտերի դասակարգում՝ ըստ չափորոշիչների (նպատակային և գործառնական նշանակությունների, հատակագծային սահմանափակումների, հարկայնության, տարբեր ռեժիմների և այլն) կադրային նախապատրաստման շրջանակում կազմակերպվել են GIS դասընթացներ կոմիտեի աշխատակիցների համար (որպես համակարգի օգտագործողներ) շենքերի անձնագրավորման շրջանակում բազմաբնակարան շենքերի վերաբերյալ տեղակատվության (տիպ, հարկայնություն, կոնտսրուկտիվ համակարգ, տեխնիկական վիճակ, բնակարանների քանակ և այլն) հավաքագրում և մուտքագրում համակարգ: Ծրագիրն իրականացվել է վթարային շենքերի մասով: Պիլոտային ծրագրի շրջանակում միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին հարող շերտերում քաղաքաշինկանա գործունեության կանոնակարգմանը միտված ծրագրի իրականացում (մեկնարկել է). • 5 կմ երկարությամբ Ճանարապհապատվածի ընտրություն (Երևան-Աշտարակ) • Ճանապարհի երկու կողմից 100 մ լայնությամբ շետրեն ընդգրկող հատվածի տեսանկարահանում դրոնով (էլեկտրոնային սկանավորում) Տվյալների մշակում՝ հատակագծային սահմանափակումների առանձնացմամբ և փոխկապակցմամբ կադաստրային ծածկագրերի հետ՝ հետագայում

1	2	3
		թույլտվությունների թվային համակարգում տվյալ հատվածների նկատմամբ այլ կարգավորումներ կիրառելու նպատակով:
	4.2. Նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության գործառույթների քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգավորումների վերանայման վերաբերյալ համապատասխան իրավական ակտերի ներկայացում Ժամկետ՝ 2021-2024թ.	**Կատարված է մասնակի (շարունակական):** Հաստատվել է կոմիտեի նախագահի կողմից: - ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017թ-ի N 128-Ն հրամանում նախագծերի կազմն ու բովանդակությունը սահմանող պահանջներում կատարվել են փոփոխություններ և լրացումներ - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի նոյեմբերի 8-ի N 21-Ն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հրաման (Լ): - Հաստատվել է նախագծերի պետական համալիր փորձաքննության կարգը ՀՀ վարչապետի «Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի և ճարտարապետաշինարարական նախագծերի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննություն իրականացնող հանձնաժողովներ ստեղծելու և դրանց աշխատակարգերը հաստատելու մասին» N 978-Լ որոշում): - Հաստատվել են նախագծերի մշակման տևողության նորմեր (Ռ): - Հաստատվել է ՀՀ կառավարության 2015 թ. 596-Ն որոշման մեջ սահմանված էական և ոչ էական շեղումների ընդլայնված ցանկը - ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 23-ի Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին N 395-Ն որոշում (Լ): - Հաստատվել է շինարարության/քանդման թույլտվության տրամադրման կարգը (Լ): - Մշակվել է տեխնիկական հսկողության իրականցման կարգը (Ռ): Օբյեկտների ցանկն ըստ ռիսկայնության աստիճանի գնահատման և օբյեկտի ռիսկայնության չափորոշիչների դասակարգման նոր մշակված մեթոդաբանությունը գտնվում են շահարգիռ մարմինների կարծիքների ամփոփման փուլում:
Նպատակ 5. Տարածքային ռեսուրսների խնայողական օգտագործում, առողջ կենսամիջավայրի ձևավորում Խնդիր. ՀՀ բնակավայրերի տարածքներում առկա նախկին արդյունաբերական տարածքների լիարժեք, արդյունավետ օգտագործման անհրաժեշտություն		

1	2	3
12	5.1. ՀՀ բնակավայրերում արդյունաբերական տարածքների գույքագրում, հարմարեցված օգտագործման հայեցակարգի մշակում 2025թ. (կիսամյակային հաշվետվություններ)	Քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակվել է հարցաշար և տրամադրվել համայնքներին: Համայնքների կողմից ստացվել են տեղեկատվական հարցաշարերը՝ լրացված: Ընթանում են դրանց վերլուծության և ամփոփման գործընթացը՝ հետագա հայեցակարգերի մշակման նպատակով:
Նպատակ 6. Քաղաքաշինական օրենսդրական դաշտի արդիականացում **Խնդիր.** Միջազգային օրենսդրությանը համապատասխան իրավական և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի բազայի ստեղծում		
13	6.1. Ոլորտի օրենսդրական բազայի կատարելագործում՝ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի ընդունման միջոցով Ժամկետ՝ 2022թ.	**Կատարված է մասնակի (շարունակելի)** Մշակվել և հաստատվել է Կոմիտեի կողմից մշակվել և 2023 թվականի մարտի 2-ի N 263-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Կոմիտեի կողմից մշակվել և 2023 թվականի փետրվարի 16-ի N215-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակվել և ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի N 936–Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի կամ դրանց առանձին հատվածների պատմամշակութային հիմնավորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:
14	6.2. Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ իրավական փաստաթղթերի համակարգի բարեփոխում՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում լիազորող նորմի սահմանում և դրա հիման վրա ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանների ընդունում	**Կատարված է մասնակի (շարունակելի)** Լիազորող նորմերը սահմանվել են «Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում, որն ընդունվել է 2023 թվականի ապրիլի 13-ին և պաշտոնապես հրապարակվել է 2023 թվականի մայիսի 11-ին (ՀՕ-139-Ն)

1	2	3
	Ժամկետ՝ 2021թ.	Համապատասխան միջոցառումները նախատեսվում է իրականացնել ՀՀ վարչապետի 2023 թվականի օգոստոսի 8-ի ««Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2023 թվականի ապրիլի 13-ի N ՀՕ-139-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի N 330-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 804-Ա որոշմամբ հաստատված ցանկով սահմանված ժամանակահատվածներում:
Նպատակ 7. Ծախսային ծրագրերի արդյունավետության գնահատում Խնդիր. Ներդրումների առավել նպատակային ուղղորդում		
15	7.1. Ռազմավարական ծրագրերի նպատակայնության արդյունավետության գնահատմանն ուղղված չափորոշիչների համակարգի մշակում՝ ծրագրերի իրականացման բոլոր փուլերում 2023թ., (կիսամյակային հաշվետվություններ)	**Կատարված է մասնակի (շարունակական):** Էկոնոմիկայի նախարարությունում նույնաբովանդակ խնդրի քննարկմանն ուղղված աշխատանքային խմբի ձևավորման և քաղաքաշինության կոմիտեից համապատասխան թեկնածուի ներգրավման արդյունքում քննարկվում է նշված միջոցառման նպատակահարմարության հարցը:
Նպատակ 8. Մշակութային կյանքի ապակենտրոնացում, միջազգային կապերի ընդլայնում, ճանաչելիության բարձրացում **Խնդիր. Առկա վիճակի գնահատում, միասնական ծրագրի առաջադրում**		
16	8.1 Համայնքներում մշակույթի տների և թանգարանների հաշվառում, տեխնիկական վիճակի և արժեքավորության գնահատում արդիականացում 2023-2024թթ.	**Կատարված է մասնակի (շարունակական):** Միջոցառման շրջանակում մշակվել են ձևաչափեր՝ տեղեկատվության հավաքագրման նպատակով: ԿԳՄՍ-ի կողմից գնահատվել են համանման շենքերի արժեքավորությունը և մշակվել են դրանց համալրվող ծրագրեր: Կոմիտեի կողմից <<Շենքերի և շինությունների մատչելիություն և անձնագրավորում>> ծրագրի (ՀՀ կառավարության 2023թ-ի 250-Լ որոշում) շրջանակում (հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ մոտեցում) իրականացվում են նույնաբովանդակ աշխատանքներ: Քննարկվում է նշված միջոցառման նպատակահարմարության հարցը է:

1	2	3
17	8.2 Ալ. Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի արդիականացում Ժամկետ՝ 2023թ.	**Կատարված է մասնակի (շարունակական):** Կազմակերպվել են մի շարք գիտաժողովները, ցուցահանդեսները: Թանգարանի գործառույթների հանրաժողովման շրջանակում ստեղծվել է էլեկտրոնային էջ, երիտասարդների շրջանակում մրցույթների անցկացման ավանդույթի վերածնման շրջանակում լրամշակվել է կարգը: Մայրաքաղաք-մարզի շրջանակում կազմակերպվել է Ռ Իսրայելյանի աշխատանքների շրջիկ ցուցահանդես: Մանկական, երիտասարդական ստեղծագործական ներուժի բացահայտման մասով մասնագիտական կրթական հաստատությունների, դպրոցների աշակերտների՝ թեմատիկ ցուցահանդեսների այցելությունների, դրանց ազդեցությամբ ստեղծագործական աշխատանքի կատարում (Շանթի դպրոցի աշակերտների կողմից օղակաձև զբոսայգու կազմակերպման առաջադրանքների մշակում): Ֆոնդային նյութերի վերականգման լաբորատորիայի ստեղծման համար ֆինանսական միջոցների բացակայության պատճառով աշխատանքներ չեն կատարվել: Միևնույն ժամանակ, տարածքների հաշվառման, մակերեսների, մոտեցումների համալիր հետազոտության արդյունքում առանձնացվել են թանգարանի տարածքում համապատասխան մակերես; Էլեկտրոնային արխիվի ստեղծման նպատակով ֆոնդային նյութերի արխիվի ձևավորման գործընթացի մեկնարկի շրջանակում հաշվառվել, դասակարգվել, մեկնարկել են այդ նյութերի թվայնացման (սկանավորման գործընթացը): Արդյունավետություն ապահովելու նպատակով, հայտ է ներկայացվել համապատասխան տեխնիկական միջոցների ձեռքբերման համար:
Նպատակ 9. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների հստակեցում. **Խնդիր. Վարչարարության, թույլտվությունների, եզրակացությունների տրամադրման միասնական կարգի ստեղծում**		
18	9.1. ՀՀ օրենսդրությամբ քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների սահմանում, լիցենզիաների տրամադրման ընթացակարգի կազմում և ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ Ժամկետ՝ 2021թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	**Կատարված է:** - ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ու որակավորման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 2106-Ն որոշում (http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=186529),

1	2	3
		- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի «Քաղաքաշինության գործունեության սուբյեկտների լիցենզիաների դասակարգման և պատասխանատու մասնագետների հավաստագրման անցումային կարգը հաստատելու մասին» N 15-Ն հրաման (http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=187000):
19	9.2. Քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների դասակարգում ըստ ռիսկայնության աստիճանի: Քաղաքաշինական թույլատվական ընթացակարգերի համապատասխանեցում սահմանված քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների դասակարգմանը Ժամկետ՝ 2021թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	**Կատարված է:** - ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1292-Ն, 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1912-Ն և 1997 թվականի նոյեմբերի 29-ի N 547 որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1331-Ն որոշում (http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=181085), - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 23-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների կազմակերպմանը, իրականացմանը և մասնակցությանը ներկայացվող պահանջների, յուրաքանչյուր մասնագիտության գծով շնորհվող կրեդիտների տեսակների, քանակի և դրանց շնորհման չափորոշիչները սահմանելու մասին» N 06-Ն հրաման (http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=183384), - ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 22-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիա չպահանջող աշխատանքների և ծառայությունների ցանկը հաստատելու մասին» N 1615-Ն որոշում (http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=182906:
20	9.3. Քաղաքաշինության բնագավառում միասնական ռեեստրի ստեղծման, կառուցվածքի, վարման և մոնիթորինգի իրականացման հարթակի ստեղծում Ժամկետ՝ 2022-2024թ.թ.	**Կատարված է մասնակի:** - ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 7-ի «Լիցենզավորված անձանց և հավաստագրված մասնագետների ռեգիստրի ձևավորման, տվյալների փոփոխության, լրացման և գրանցամատյանի վարման կարգը հաստատելու մասին» N 328-Ն որոշում (http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190591)

1	2	3
		- Մշակվել և շրջանառվում է «Լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորման և մոնիթորինգի իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: ***Նախագիծը դեռևս ընդունված չէ:*** **Գրանցամատյանի վարումն ու մոնիթորինգի իրականացումը նախատեսվում է իրականացնել 2025 թվականին:**
Նպատակ 10. Մասնագետների որակավորման բարձրացման նպատակով քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացման համակարգի ներդնում, շարունակական մասնագիտական զարգացման գործառույթի ապահովում հասարակական կազմակերպությունների, բարձրագույն կրթության հաստատությունների միջոցով որոնք կբավարարեն օրենսդրությամբ սահմանված պահանջները. **Խնդիր. Լիցենզավորված կազմակերպությունների ռեյտինգավորման ցանկի ստեղծում**		
21	10.1. Լիցենզավորման գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության ձևավորման մեթոդակարգի մշակում Ժամկետ՝ 2023-2024թ.թ.	**Կատարված է մասնակի (շարունակական):** -- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի դեկտեմբերի 12-ի «Լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվության և մասնագետների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 26-Ն հրաման (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=201290), - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 10-ի «Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան քաղաքաշինական գործունեության օբյեկտներում իրականացվող աշխատանքների և ծառայությունների մատուցման գործելակարգերը և պատասխանատու մասնագետների մասնագիտական բնութագրերը հաստատելու մասին» N 05-Ն հրաման (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=203018), - Մշակվել և շրջանառվում է «Լիցենզավորված և հավաստագրված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների գրանցամատյաններից օգտվելու հասանելիություն ունեցող պետական մարմինների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: *Նախագիծը դեռևս ընդունված չէ:*
22	10.2. Մասնագիտական որակավորման հանրային իրազեկմանը միտված քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված կազմակերպությունների ռեյտինգավորման ցանկի ստեղծում	**Կատարված է մասնակի (շարունակական):**

1	2	3
	Ժամկետ՝ 2023թ.	- ՀՀ կառավարության 07.03.2024թ. «Լիցենզավորված անձանց և հավաստագրված մասնագետների ռեգիստրի ձևավորման, տվյալների փոփոխության, լրացման և գրանցամատյանի վարման կարգը հաստատելու մասին» N 328-Ն որոշում (http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190591) -Թվային գրանցամատյանը ստեղծված է, վարկանիշավորման գործընթացի ինքնաշխատ թվային համակարգի ստեղծումն ընթացքի մեջ է: - Մշակվել և շրջանառվում է «Լիցենզավորված քաղաքաշինական գործունեության սուբյեկտների կողմից աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման որակի գնահատման չափորոշիչները սահմանելու մասին» ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանի նախագիծը: ***Նախագիծը դեռևս ընդունված չէ:*** - Մշակվել, շրջանառվել և ՀՀ արդարադատության նախարարություն փորձագիտական եզրակացության է ներկայացվել «Քաղաքաշինության բնագավառի պատասխանատու մասնագետի էթիկայի կանոնները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: ***Նախագիծը դեռևս ընդունված չէ, ավարտական փուլում է:*** - Մշակվել և շրջանառվում է «Լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորման և մոնիթորինգի իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: ***Նախագիծը դեռևս ընդունված չէ:***
Նպատակ 11. ԱՊՀ անդամ-պետությունների համապատասխան ոլորտներում փոխհամաձայնեցված մեթոդների, նոր հայեցակարգերի և ձեռքբերումների շուրջ քննարկումների կազմակերպում ու փորձի փոխանակում: **Խնդիր. Քաղաքաշինության և ճարտարապետության ոլորտներում առկա խնդիրների լուծման նոր ուղիների ու քայլերի մշակում, պետությունների միջև բարեկամական կապերի ամրապնդում ինչպես նաև 1994 թվականի սեպտեմբերի 9-ին Մոսկվայում ստորագրված շինարարության ոլոտում համագործակցության Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարում:**		
23	11.1 ԱՊՀ անդամ-պետությունների շինարարության ոլորտում համագործակցության միջկառավարական խորհրդի հերթական 42-րդ նստաշրջանի կազմակերպում Ժամկետ՝ 2022 թվականի առաջին կիսամյակ	**Ավարտված է:** 2022 թվականի մայիս-հունիս ամիսներին նախատեսվում էր Երևանում կազմակերպել ԱՊՀ միջկառավարական խորհրդի 43-րդ նիստը: 2022 թվականի ապրիլի 19-ի N01/21/3644-2022 և դեկտեմբերի 26-ի N01/21/14368-2022 գրություններով «Շինարարության համապատասխանության գնահատման,

1	2	3
24	11.2 ԱՊՀ Գործադիր Կոմիտեի կողմից 2021 թվականը ճարտարապետության և քաղաքաշինության տարի հայտարարելու շրջանակներում միջոցառումների կազմակերպում Ժամկետ՝ 2021 թվականի մայիսի 3-րդ տասնօրյակ	ստանդարտացման և տեխնիկական գնահատման դաշնային կենտրոնին» առաջարկվել է նիստը անցկացնել 2023 թվականին: 2022 թվականի հուլիսի 4-ի N01/21/6995-2022 գրությամբ վերոնշյալ տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: 2023 թվականի հունիսի 16-ի N01/21/5983-2023 գրությամբ «Շինարարության համապատասխանության գնահատման, ստանդարտացման և տեխնիկական գնահատման դաշնային կենտրոնին» տեղեկացվել է, որ աշխատանքային գրաֆիկի ծանրաբեռնվածությունից ելնելով 2023 թվականին Երևանում միջոցառման կազմակերպումը հնարավոր չէ: Նիստի անցկացումը Երևանում չեղարկվել է և նիստը տեղի է ունեցել 2023 թվականի դեկտեմբերի 5-ին Բելառուսի Հանրապետությունում (Մինսկ):
25	11.3 ԱՊՀ Գործադիր Կոմիտեի կողմից 2021 թվականը ճարտարապետության և քաղաքաշինության տարի հայտարարելու շրջանակներում միջոցառումների կազմակերպում Ժամկետ՝ 2021 թվականի սեպտեմբեր	
Նպատակ 12. Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի արդիականացում **Խնդիր. Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի ապահովում**		
26	12.1. Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի (տեխնիկական կանոնակարգեր, շինարարական նորմեր, շինարարական նորմերի կանոնների հավաքածուներ, ստանդարտներ, կարգեր) մշակում, վերանայում, տեղայնացում Ժամկետ՝ 2021-2024թթ.	**Կատարված է մասնակի (շարունակական):** • 2024թ պատվիրվել են թվով 25 նորմատիվատեխնիկական փաստաթղթեր • 2021-2026թթ միջոցառումների ծրագրում 2024թ ներառվել են նոր ենթամիջոցառումներ - *«ԵՄ անդամ պետությունների քաղաքաշինության ոլորտի ստանդարտների տեխնիկական թարգմանություն, մասնակի տեղայնացում»,* *«Հանրակրթական նշանակության օբյեկտների շենքերի և շինությունների շահագործման և սպասարկման մեթոդական ուղեցույցի/ձեռնարկի մշակման աշխատանքներ»:*
Նպատակ 13. Շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի սահմանում **Խնդիր. Շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման ռեսուրսային մեթոդաբանության մշակում**		
27	13.1. Շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի մշակում Ժամկետ՝ 2021 -2024թ.թ.	**Կատարված է մասնակի:** (Նախագիծը դեռ ընդունված չէ) 2024թ լրամշակվել է «Շինարարության ոլորտում գնագոյացման քաղաքականությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանով հաստատվել են տարբեր նշանակության օբյեկտների շինարարական աշխատանքների արժեքների խոշորացված ցուցանիշները:
Նպատակ 14. Շինարարության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրում և տեղական հումքի կիրառության ոլորտների ընդլայնում		

1	2	3
Խնդիր. Նոր տեխնոլոգիաների ներդրման համար նորմատիվ փաստաթղթերի ապահովում		
28	14.1. Շինարարությունում նոր տեխնոլոգիաների ներդրման և տեղական հումքի կիրառության ոլորտների ընդլայնմանը նպաստելու ուղղությամբ աջակցության ցուցաբերում Ժամկետ՝ 2023թ.	**Կատարված է (շարունակելի)** Նոր շինարարական նյութերի արտադրության և ներդրմանն աջակցելու նպատակով Կոմիտեի պատվիրատվությամբ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին մշակվել և Կոմիտեի նախագահի հրամաններով հաստատվել են. - ՀՀԿՀ 52-101-2022 «Շինարարական բետոնե և գեոտեխնիկական կոնստրուկցիաներում ոչ մետաղական կոմպոզիտ ամրանների կիրառման կանոնների հավաքածուն (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հուլիսի 18-ի N45-Ա հրաման), - ՀՀԿՀ 53-101-2022 «Սառնաճկած պողպատե բարակապատ տրամատների կիրառմամբ շենքերի ու շինությունների նախագծման կանոնների հավաքածուն (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 6-ի N75-Ա հրաման): Կազմակերպվել են քննարկումներ ստորև ներկայացվող նորարարական տեխնոլոգիաների ներդրման վերաբերյալ. - «Արմբազալտ» փակ բաժնետիրական ընկերության (նախկինում «Արգել» փակ բաժնետիրական ընկերություն) կողմից արտադրվող բազալտեկոմպոզիտային ամրաններն ամրանաբետոնե կոնստրուկցիաներում կիրառելու, - «Օնիքս 3Գ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից բազալտե և ապակե մանրաթելերի հենքի վրա փուլթրուզիոն եղանակով արտադրվող բազալտեպլաստե և ապակեպլաստե տրամատներից նախապատրաստված կոնստրուկտիվ տարրեր ու շինվածքներ կիրառելու, - քաղաքացի Աշոտ Տոնոյանի կողմից առաջարկված շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացմանն ուղղված հիդրավլիկ մարիչներ կիրառելու, - «ԱՔԻՓ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված ներկառուցված 3D ինժեներական մետաղական վահանակներ կիրառելու վերաբերյալ:
Նպատակ 15. Գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների կազմակերպում **Խնդիր. Ապահովել շինարարական ոլորտի գիտատեխնիկական զարգացումը**		
29	15.1. «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն»–ի արդիականացում Ժամկետ՝ 2023թ.	**Կատարված է մասնակի** *Միջոցառման իրականացումը նպատակահարմար չէ՝ հաշվի առնելով ի հայտ եկած ֆինանսական և դատական պրոցեսներում առկա խնդիրների բազմազանությունը, դրանց ապահովման ոչ իրատեսական լինելը:* *Առաջարկվում է ՊՈԱԿ-ի ստեղծման հարցը*

1	2	3
		• 2024թ. ընկերության բաժանման գործընթացն ավարտին հասցնելու նպատակով ձեռք բերված իրավաբանական ծառայությունների 1-ին փուլի հաշվետվությունը ներկայացվել է, ընթանում է 2-րդ փուլի գործընթացը • 2023թ մշակվել է Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոնի պետական և մասնավոր բաժնեմասերի առանձնացման և զարգացման ծրագրի նախագիծը • 2023 թվականին իրավաբանական ընկերությանը պատվիրվել են Կենտրոնի պետական և մասնավոր բաժնեմասերի առանձնացման ծառայություններ
Նպատակ 16. Շենքերի ու շինությունների սեյսմակայունության ապահովում, անվտանգ շահագործման նպատակով միջոցառումների մշակում և իրականացում **Խնդիր. Հայաստանի Հանրապետության տարածքում առկա սեյսմիկ ռիսկի նվազեցման և բնակչության անվտանգության ապահովման հիմնախնդրի լուծում**		
30	16.1. Շենքերի և շինությունների անձնագրավորման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում Ժամկետ՝ 2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	**Կատարված է մասնակի (շարունակական):** (նախագծերը դեռ չեն ընդունվել) - 2024թ մշակվել է «Շենքերի և շինությունների անձնագրավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը 2024թ մշակվել է «Շենքերի և շինությունների անձնագրերի լրացման (անձնագրավորման) մեթոդաբանությունը և անձնագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանի նախագիծը:
31	16.2. Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող շենքերի և շինությունների հետագա շահագործման հետ կապված հարցերի կանոնակարգում Ժամկետ՝ 2021-2024թ.	**Կատարված է մասնակի (շարունակական):** (նախագծերը դեռ չեն ընդունվել) - 2024թ մշակվել է «Շենքերի և շինությունների անձնագրավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը - 2024թ մշակվել է «Շենքերի և շինությունների անձնագրերի լրացման (անձնագրավորման) մեթոդաբանությունը և անձնագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանի նախագիծը:
Նպատակ 17. Սողանքային երևույթների կանխատեսում և դրանցից պաշտպանություն **Խնդիր. Սողանքային աղետից պաշտպանության ուղղությամբ հետազննությունների իրականացում և ռեժիմային դիտարկումների (մոնիտորինգ) համակարգի ստեղծում**		

1	2	3
32	17.1. Առավել վտանգավոր սողանքային տեղամասերում հետազննությունների և կանխարգելիչ միջոցառումների ծրագրերի մշակում Ժամկետ՝ 2023թ.	**Կատարված է (շարունակելի)** ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի ապրիլի 14-ի N09-Ն հրամանով ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրամանում կատարվել են համապատասխան լրացումներ կառուցապատման նախագծերում սողանքի կանխարգելման սողանքային երևույթներից տարածքների ինժեներական պաշտպանությունն ապահովող միջոցառումներ նախատեսելու վերաբերյալ: Բացի այդ, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N09-Ն հրամանով հաստատվել են ՀՀՇՆ 22-02.01-2023 «Տարածքների, շենքերի և շինությունների ինժեներական պաշտպանությունը երկրաբանական վտանգավոր երևույթներից» շինարարական նորմերը: Կոմիտեն 2023թ մշակել և սահմանված կարգով շրջանառել է «Հայաստանի Հանրապետության սողանքային աղետի կառավարման հայեցակարգը և դրանից բխող միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի 2023 թվականի սեպտեմբերի 6-ի N05/03.8/30559-2023 հանձնարարականի համաձայն, Նախագիծը Կոմիտեի 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N01/14.2/12510-2023 գրությամբ (կրկին) ներկայացվել է ՀՀ ներքին գործերի նախարարություն՝ վերջինիս դրույթները «Աղետների ռիսկի կառավարման 2023-2030 թվականների ռազմավարությունը և 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ ռազմավարություն) հետ համադրելու և ռազմավարության ճանապարհային քարտեզում ներառելու համար: ՀՀ ներքին գործերի նախարարությունը 2023 թվականի սեպտեմբերի 20-ի N43/2/112850-23 գրությամբ տեղեկացրել է, որ «Հայաստանի Հանրապետության սողանքային աղետի կառավարման հայեցակարգը և դրանից բխող միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի դրույթները ներառվել են ռազմավարությունում:
Նպատակ 18. Բնակարանային ֆոնդի հիմնախնդիրների կանոնակարգում **Խնդիր 1. Բազմաբնակարան շենքերի պահպանման, շահագործման, արդիականացման հետ կապված հարցերի կանոնակարգում**		
33	18.1.1 Բազմաբնակարան շենքերի պահպանման և շահագործման, արդիականացման (այդ թվում՝ էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացման) կանոնների հաստատում Քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանով	**Կատարված է:** Կանոնները հաստատվել են Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունվարի 31-ի N02-Ն հրամանով: (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159909):

1	2	3
	Ժամկետ՝ 2022 թվականի հունվարի 3-րդ տասնօրյակ.	
34	18.1.2 «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ Ժամկետ՝ 2023թ.	**Կատարված է:** 1. Մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի հուլիսի 1-ին ընդունվել է ««Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (ՀՕ-297-Ն) և ««Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (ՀՕ-298-Ն) օրենքները: (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=154469) (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=154463) 2. Մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից 2024 թվականի ապրիլի 11-ին ընդունվել է «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը: (https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=192457) (https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=192463):
35	18.1.3 Բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջների սահմանում՝ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքում լիազորող նորմի սահմանում և դրա հիման վրա ՀՀ կառավարության որոշման ընդունում Ժամկետ՝ 2022թ.	**Կատարված է:** 1. Մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2023 թվականի հունվարի 17-ին ընդունվել է ««Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-2-Ն): (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=173816) 2. Մշակվել և ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N1737-Ն որոշմամբ սահմանվել է Բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջները, այդ պահանջների հիման վրա անձանց վերապատրաստման և բազմաբնակարան շենքերի կառավարմանը նրանց ներգրավման: (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=183960):
36	18.1.4 Բազմաբնակարան շենքերի կառավարմանը, պահպանմանը և շահագործմանն ուղղվող ֆինանսական հոսքերի գործուն համակարգի (ֆոնդի) ստեղծման իրագործելիության ուսումնասիրություն և դրա հիման վրա առաջարկությունների մշակում	**Կատարված է:** Բազմաբնակարան շենքերի կառավարմանը, պահպանմանը և շահագործմանն ուղղվող ֆինանսական հոսքերի գործուն համակարգի (ֆոնդի) ստեղծման իրագործելիության ուսումնասիրության և դրա հիման վրա առաջարկությունները ՀՀ

1	2	3
	Ժամկետ՝ 2022թ.	վարչապետի աշխատակազմ են ներկայացվել 23.12.2022թ. N01/13/14549-2022 գրությամբ:
37	18.2.1 Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի բնակիչների վերաբնակեցմանն, ինչպես նաև գոյություն ունեցող բնակֆոնդի ուժեղացման-վերակառուցմանն ուղղված ծրագրերի իրականացման համար իրավական հիմքերի ստեղծում «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում լիազորող նորմի սահմանում և դրա հիման վրա ՀՀ կառավարության որոշման ընդունում Ժամկետ՝ 2021-2023թթ.	**<u>Կատարված է մասնակի</u>** Նախատեսված է եղել մեկ օրենքի և Կառավարության երեք որոշման նախագծերի ընդունում: Օրենքի նախագիծը ընդունվել է: Կառավարության թվով 2 որոշումներն ընդունված են, իսկ 1 նախագիծ ներկայացվել է Կառավարության քննարկմանը, սակայն դեռևս ընդունված չէ: Մասնավորապես. 1. Մշակվել է «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծը, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2022 թվականի նոյեմբերի 16-ին: (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=171794) 2. Մշակվել է «Բնակարանային ֆոնդի տեխնիկական վիճակի վերաբերյալ տեղեկատվական համակարգ ստեղծելու մասին» Կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N2288-Ն որոշմամբ: (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=187691) 3. Մշակվել է «Բնակարանային ֆոնդի տեխնիկական վիճակի հետազննությունների անցկացման և հետազննության արդյունքում տրված եզրակացությունների վարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N274-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 23-ի N2024-Ն որոշմամբ (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=185867) 4. Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Ուժեղացման և վերակառուցման և քանդման ենթակա՝ վթարային բնակարանային ֆոնդի հիմնախնդիրների կանոնակարգման պետական քաղաքականությունը, ինչպես նաև բնակարանային ֆոնդի ուժեղացման և վերակառուցման կամ քանդման դեպքում այդ ֆոնդից քաղաքացիների ժամանակավոր վերաբնակեցման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը քննարկվել է Նախարարական կոմիտեի 06.06.2023թ. և 26.12.2023թ. նիստերում, սակայն չի ընդունվել՝ լրացուցիչ քննարկման նպատակով (նախագիծը դեռևս ընդունված չէ):

1	2	3
		Քննարկվում է նախագիծը շենքերի սեյսմակայունության բարձրացման ծրագրի նախագծի հետ միավորելու հարցը:
38	18.3.1 ՀՀ Սահմանադրությամբ Կառավարության՝ բնակարանային շինարարության հանձնառությունը խթանելու նպատակով բնակարանաշինության ֆինանսավորման և բնակարանային քաղաքականության ոլորտներում պետական միասնական քաղաքականությունը սահմանող ՀՀ կառավարության որոշման ընդունում Ժամկետ՝ 2023թ.	**Մասնակի է կատարվել:** Միջոցառման շրջանակներում վերհանվել է հանրապետությունում պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրերի (բնակչության տարբեր խմբերին բնակարանով ապահովման, բնակարանային պայմանների բարելավման, բնակարան վարձակալելու համար ֆինանսական աջակցության տրամադրման) վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից նախաձեռնվել են մի շարք քննարկումներ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից նշակվում է «Բնակարանով ապահովելու միասնական սոցիալական ռազմավարությունը և հնգամյա գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Բացի այդ, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պարբերաբար նախաձեռնվում են օրենսդրական փոփոխություններ՝ բնակարանաշինության ֆինանսավորման մեխանիզմների վերանայման, բարելավման մասին: Դրանից ելնելով, Կառավարության 2021-2026թթ. ծրագրի վերանայման շրջանակներում նշված միջոցառումը փոխարինվել է «Սահմանադրությամբ Կառավարության՝ բնակարանային շինարարության հանձնառությունը խթանելու նպատակով բնակարանաշինության շարունակականության ապահովում» միջոցառմամբ, որի շրջանակներում նախատեսվում է մշակել իրավական հիմքեր՝ բնակֆոնդի ռենովացիայի ծրագրերի իրականացման իրավական հիմքեր (Ժամկետ՝ 2026 թվականի հունիսի 1-ին տասնօրյակ): Ըստ այդմ, համապատասխան փոփոխություն է առաջարկվել նաև ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշման մեջ սակայն նախագիծը չի ընդունվել: Վերոգրյալից ելնելով, քննակվում է կամ միջոցառումը հանելու, կամ միջոցառման բովանդակությունը և ժամկետը Կառավարության 2021-2026թթ. ծրագրին համապատասխանեցնելու հարցը:
39	18.4.1 Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովմանն ուղղված պետական աջակցության ծրագրի ավարտ	**Կատարված է:** Ծրագրի շահառու է ճանաչվել Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերի բնակավայրերի թվով 5419 ընտանիք, որոնցից՝

1	2	3
	Ժամկետ՝ 2021 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	- 5391-ի խնդիրը լուծվել է 2008-2021թթ.՝ շուրջ 70.0 մլրդ. դրամի հաշվին, բնակարանների հատկացման կամ բնակարանային պայմանները բարելավելու նպատակով ֆինանսական աջակցության (ԲԳՎ-ի կամ ուղղակի ֆինանսական աջակցություն) տրամադրման միջոցով, - 28 ընտանիքի (Շիրակ, Ջրաձոր) խնդիր՝ այդ ընտանիքների ցանկությամբ, լուծվելու է Կառավարության 27.08.2020թ. N1411-Լ որոշման շրջանակներում՝ Կապսի ջրամբարի կառուցման նպատակով Ջրաձոր համայնքից վերաբնակեցվող ընտանիքների հետ միասին, նոր բնակավայրի կառուցման և բնակելի տների հատկացման եղանակով: Միաժամանակ, ՀՀ կառավարության 17.06.2021թ. N1006-Ն որոշմամբ սահմանվել է, որ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Ծրագրի շրջանակներում բնակապահովման իրավունքը վերականգնած՝ Ծրագրի շահառու ճանաչված ընտանիքների բնակարանային խնդիրները լուծվելու են ֆինանսական աջակցության (բնակարանի գնման վկայագրի միջոցով կամ ուղղակի ֆինանսական աջակցություն) տրամադրման միջոցով, իսկ խնդրի լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվելու են համապատասխան տարեկան պետական բյուջեներում: Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո բնակապահովման իրավունքը դատական կարգով վերականգնել և 2021-2024թթ. Ծրագրի շահառու է ճանաչվել թվով 51 ընտանիք*), որոնցից 2021-2023թթ. Ծրագրի շահառու ճանաչված թվով 44-ի խնդիրը դիտարկվել է ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 15-ի N N1299-Ա որոշման շրջանակներում: 2024 թվականին Ծրագրի շահառու ճանաչված թվով 7 ընտանիքների (անձանց) բնակարանային խնդրի լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվել են ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով: Ծրագրի ԲԳԿ՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԲՍԿ-մարզեր: **) թիվն ունի աճման միտում՝ ի հաշիվ դատական պրոցեսում գտնվող ընտանիքների:*
40	18.4.2 Ոչ հիմնական շինությունների հետագա տնօրինման հետ կապված հարցերի կանոնակարգման նպատակով մոտեցումների սահմանում և դրանց հիման վրա ՀՀ կառավարության համապատասխան որոշումների ընդունում	Կատարված է: Մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2022 թվականի հոկտեմբերի 13-ին ընդունվել է «Աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններից ազատելու կարգը հաստատելու

1	2	3
	Ժամկետ՝ 2021-2023թ.	մասին» N1601-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում): https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=169446 Որոշման համաձայն՝ Համայնքների կողմից 2023 թվականի փետրվարի 1-ի դրությամբ հաստատվել են պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողի վրա տեղադրված ոչ հիմնական շինությունների ցուցակները: Կատարվել է նաև խնդրի լուծման համար անհրաժեշտ ֆինանսական պլանավորում. ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի 2024-2026 թվականների ծրագրով հաստատվել են՝ 2024թ. 1.4 մլրդ դրամ, 2025թ. 2.5 մլրդ դրամ և 2026թ՝ 2.1 մլրդ դրամ չափաքանակներ, 2024թ. մասով անհրաժեշտ միջոցները նախատեսվել են նաև ՀՀ 2024 թվականի պետական բյուջեում: 2023 թվականի ֆինանսավորում չպահանջող աշխատանքների մեկնարկով արդեն իսկ համայնքներում ընթանում է այն ոչ հիմնական շինությունների քանդման գործընթացը, որոնց մասով աջակցության տրամադրման գործընթաց նախատեսված չէ: 19.04.2024թ. Կառավարության քննարկմանն է ներկայացվել 2024թ. պետբյուջեով նախատեսված 1.4 մլրդ. դրամի հաշվին իրականացվելիք աշխատանքների շրջանակը սահմանող որոշման նախագիծը, որը ննարկվել է 07.05.2024թ. և 15.10.2024թ. նախարարական կոմիտեի նիստերում և չի ընդունվել: Կառավարության 13.10.2022թ. N1601-Ն որոշմամբ նախատեսված աշխատանքների ապահովման ՀՀ 2025-2027թթ. ՄԺԾ ծրագրով չափաքանակներ չեն հաստատվել, ինչպես նաև 2025թ. բյուջեի նախագծով միջոցներ չեն նախատեսվել: Քննարկվում է խնդիրը դիտարկել բնակարանով ապահովման միասնական սոցիալական ռազմավարության շրջանակներում: